ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 փետրվարի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

26
(3057)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԱՆՁԱՄԲ ԿՄԱՍՆԱԿՑԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

ՔՊ-ում արդեն իսկ պատրաստվում են 2026 թվականի ընտրություններին: Սպասվող ընտրություններից առաջ իշխանականները խմբերի են բաժանվել եւ գործի անցել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ վերջին փակ նիստերից մեկի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հանձնարարել է ընտրություններից առաջ «թիմերի բաժանվել ու աշխատել», ինչպես ինքն է սիրում ասել՝ հօգուտ թիմի:

ՔՊ-ականների մի մասին հանձնարարվել է այցելել մարզեր, քաղաքացիների հետ հանդիպել, սիրաշահել, մի մասին հանձնարարվել է մայրաքաղաքում տարբեր ակտիվ շրջանակների, երիտասարդների հետ հանդիպել, մեկ այլ մասի հանձնարարվել է հարցազրույցներ տալ ու հերթով տարածել ՔՊ-ական թեզերը՝ իրական Հայաստան, Խաղաղության պայմանագիր եւ այլն:

Մյուս խմբին էլ հրահանգվել է օրնիբուն աշխատել՝ Գյումրու եւ Փարաքարի ընտրություններում հօգուտ ՔՊ-ի ձայներ հավաքելու համար:

Ի դեպ, ինչպես մեզ փոխանցում են, նախընտրական ողջ գործընթացին ակտիվ մասնակցելու է անձամբ Փաշինյանը:



Այսօր ՀՀ արտաքին գործերի նախարարության մոտ բողոքի ակցիա է սպասվում ի պաշտպանություն Ռուբեն Վարդանյանի, ում Բաքվում խոշտանգել են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանությունների ներսում եւս անհանգստություն կա, նախ այն բանի համար, թե ինչքան մարդ ոտքի կկանգնի, եւ ինչպես դրան կարձագանքի թշնամի երկիրը: Նախօրեին Վարդանյանի որդին կոչով դիմեց, որ իր հորը խոշտանգել են, եւ պետք է քայլեր ձեռնարկել: Սակայն հայրենի իշխանություններից որեւէ մեկը մի հոդաբաշխ նախադասություն չի ասել, թե ինչ է անում այս վայրագությունների դեմ: Երեկ ՀՀ արդարադատության նախարարն ու ՀՀ ՄԻ պաշտպանը կիսատ-պռատ հայտարարեցին, թե նամակներ են գրել պատկան մարմիններին ու վերջ: Երեկվա հավաքը իշխանություններին անհանգստացրել է, որ գուցե նոր կրքեր բորբոքվեն: Հիշեցնենք, որ երեկ, ի պաշտպանություն Բաքվում պահվող Ռուբեն Վարդանյանի, Կառավարության շենքի մոտ ակցիա տեղի ունեցավ, որի ժամանակ մասնակիցները պահանջում էին անհապաղ քայլեր ձեռնարկել՝ ազատ արձակելու Ռուբեն Վարդանյանին եւ բոլոր հայ գերիներին: Նրանք նաեւ կոչ էին անում ՀՀ ԱԳՆ-ին հանդես գալ հրատապ հայտարարությամբ եւ հրավիրել Հայաստանում հավատարմագրված դիվանագետների հավաք: Ռուբեն Վարդանյանը եւ մյուս գերիներն ու պատանդները Բաքվում պահվում են ապօրինի: Ակցիայի մասնակիցները պահանջում են, որ ՀՀ Կառավարությունը գործադրի բոլոր լծակները՝ Ռուբեն Վարդանյանին եւ մյուս հայ գերիներին հայրենիք վերադարձնելու համար:

Փետրվարի 25-ին հայտնի դարձավ, որ ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանի տունը թալանել են: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ գողերը նրա տուն են մտել անխոչընդոտ՝ հարմարեցված բանալիով տան դուռը բացելով: Ինքը՝ Նազելի Բաղդասարյանը, հրաժարվում է «Ժողովուրդ» օրաթերթին կատարվածի մասին որեւէ տեղեկություն կամ մեկնաբանություն տալ (երկու անգամ փորձել ենք, բայց անարդյունք): Բաղդասարյանը, որ Շիրակի մարզպետն է եղել նախկինում, իր մտերիմ շրջապատին պատմել է եղելությունը: «Ժողովուրդ» օրաթերթը Նազելի Բաղդասարյանի շրջապատից տեղեկացավ, որ նրա տանից գողացել են ոսկյա թանկարժեք զարդեր, ոսկեգույն մետաղյա զարդեր (կարծելով, թե ոսկի է), մեկ ժամացույց, թեւնոց եւ այլ իրեր: Ընդհանուր նախնական հաշվարկով, ըստ Նազելի Բաղդասարյանի մերձավորների, վարչապետի խոսնակին գողերը պատճառել են մոտ 50 հազար ԱՄՆ դոլարի վնաս: Բայց այս հաշվարկը խիստ նախնական է, այն կարող է ավելանալ կամ պակասել:



Ալեն Սիմոնյանի ոչ միայն ընտանիքի անդամները, այլ նաեւ աշխատակիցները «գրավել են» ՔՊ-ն: Ինչպես ավելի վաղ ArmLur.am-ը հայտնել էր, Ալեն Սիմոնյանի մայրը՝ Մարինա Հովհաննիսյանը, եւ եղբայրը՝ Կառլեն Սիմոնյանը, փետրվարի 24-ին մասնակցել էին Կենտրոն տարածքային կառույցի խորհրդի նիստին: ՔՊ-ից մեզ հայտնել էին, որ Ալեն Սիմոնյանի մայրը ՔՊ առաջին համագումարից դեռ կուսակցության անդամ է, իսկ եղբայրը՝ Կառլեն Սիմոնյանը, 2024 թվականից է ՔՊ կուսակցությանն անդամագրվել: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ ոչ միայն Ալեն Սիմոնյանի ընտանիքի անդամները, այլ նաեւ աշխատակիցներն են մասնակցում ՔՊ նիստերին: Երեկ ՔՊ նախաձեռնող նիստին մասնակցել է նաեւ Ալեն Սիմոնյանի «սրտի աշխատակիցներից» նրա խորհրդական Աշխեն Հայրապետյանը, ով գրեթե բոլոր գործուղումներին ուղեկցում է Սիմոնյանին:

ԶՐՈՒՅՑ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՄԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Արցախի ՄԻՊ Գեղամ Ստեփանյանը մասնակցում է «Հայ Հեղափոխական Դաշնակցության» 35-րդ գլխավոր ժողովին, որի ժամանակ ArmLur.am-ի հետ զրույցում անդրադարձել է Ալեն Սիմոնյանի՝ արցախցիների մասին հայտարարություններին:

-Պարոն Ստեփանյան, այս օրերին պարբերաբար տեղեկություններ եւ ահազանգեր են հնչում, որ արցախցիներին տրամադրվող աջակցությունն այլեւս չի գործում, որոշ ծրագրեր ավարտվել են: Սրա վերաբերյալ ի՞նչ տեղեկություններ ունեք:

-Ունեմ այն տեղեկությունը, որը պաշտոնապես կոմունիկացվել է: Այսինքն՝ սկսած ապրիլ ամսվանից կեցության ծախսերը հոգալու համար տրամադրվող աջակցությունը միայն տրամադրվելու է անչափահասներին, տարեցներից՝ 63 եւ ավելի տարիք ունեցողներին եւ 1-ին ու 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող անձանց: Սրա վերաբերյալ մենք բազմիցս մեր դիրքորոշումը արտահայտել ենք եւ բավականին հիմնավորված. այդ հիմնավորումը հետեւյալն է, որ եթե փախստականների ինտեգրման մյուս բաղադրիչները՝ բնակարանային, զբաղվածության կամ այլ, եթե հավուր պատշաճի կարգավորված չեն, ապա ֆինանսական աջակցության դադարեցումը բերելու է սոցիալ-կենցաղային շատ ավելի ծանր պայմանների, եւ հենց դրանով է պայմանավորված, որ արցախցիները այս հարցի կապակցությամբ բողոքի ձայն են բարձրացնում: Պահանջը շատ տրամաբանական է. մինչեւ դրանով չապահովեք՝ չդադարեցնեք ֆինանսական աջակցությունը: 20,000-ից ավելի արցախցի զբաղված է, այսինքն՝ գրանցված աշխատանք ունի, որոնցից մինչեւ 200,000 դր. աշխատավարձ ստացողների թիվը մեծամասնություն է: Սա նշանակում է, որ անգամ աշխատավարձ ստանալով հանդերձ՝ մարդիկ չեն կարողանում բնակվարձի հարց լուծել: Հետեւաբար, անհրաժեշտ է պետության աջակցությունը:

-Իսկ, ըստ Ձեզ, այս ծրագրերի կասեցումը, դադարեցումը, ինչ-որ հատուկ միտո՞ւմ ունի:

-Ես այդ առումով ուղիղ հարց եմ տվել պատասխանատուներին, թե ինչն է պատճառը, ֆինանսակա՞ն խնդիրները, թե՞ այլ հարցեր կան: Շատ լղոզված պատասխան եմ ստացել, թե դադարեցնում են, որ մարդիկ օգտվեն բնակարանային ապահովման աջակցության պետական ծագրից: Բայց չի կարելի մարդուն ստիպելով տանել այդ դաշտ, հատկապես, երբ խոսքը խոցելի խմբի մասին է. հակառակը, պետք է խթանիչ գործողություններ կիրառել, որպեսզի ժողովուրդը կարողանա օգտվել այդ ծրագրից: Ասվում է՝ այդպես են անում, որ մարդիկ սկսեն աշխատել, բայց ես նորից եմ կրկնում՝ այնպես չէ, թե մարդիկ չեն աշխատում: Ո՛չ, նրանք աշխատում են, բայց ստացած գումարը բավարար չէ եւ կենսաապահովման միջոցներ ձեռք բերելու՝ սնունդ եւ այլ, եւ բնակարանային հարցին լուծում տալու համար: Կա որոշակի ինֆորմացիա, որ անգամ «40+10» աջակցությունը դադարեցնելուց հետո քննարկվում է, որ սոցիալապես անապահով, տեղահանված ընտանիքներին բնակվարձի փոխհատուցման ինչ-որ ծրագրեր կարող են գործարկվել: Իհարկե, սա շատ նախնական փուլում է, չեմ կարող ասել, թե դա ինչ է ենթադրում, բայց լսել եմ նմանատիպ խոսակցություններ:

-Պարոն Ստեփանյան, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն ասում է՝ իրենց բնակարանները լքելու փոխարեն՝ արցախցիները պետք է մնային եւ մինչեւ վերջ կռվեին: Ապա խմբագրեց, որ ընդհանրական է սա ասել, ու, կարծեք, Նիկոլ Փաշինյանն էլ կիսում էր ԱԺ նախագահի տեսակետը:

-Ես նշել եմ, որ կարելի է բերել բազմաթիվ դրվագներ, բայց դրանք իրապես անիմաստ են, որովհետեւ այդ հայտարարությունները ցինիզմի եւ անբարոյականության գագաթնակետն են: Ինչ վերաբերում է խմբագրումներին, ապա անկեղծորեն ասեմ, որ դրանք լեզվական աճպարարություններ են, եւ սա առաջին դեպքը չէ, երբ ասում են մի բան, հետո սկսում արդարանալ, խմբագրել, եւ ասվածի ուղղությունը փոխել: Խոսքը խոր արմատներ ունեցող ատելության մասին է, որը նաեւ արտահայտվում էր Ալեն Սիմոնյանի միմիկաներում, երբ ինքը պատասխանում էր արցախցի լրագրողի հարցին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՈՐՈՇՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՈՐՔԱՆՈՎ ՀԵՏԵՎԵՑԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԻՆ

Կառավարության առաջարկությամբ ընդունված որոշումով Հայաստանի Հանրապետությունում նոյեմբերի 15-ից մինչեւ մարտի 31-ը ոչ ձմեռային անվադողերով երթեւեկելը արգելվում է:

Սա արվում է, քանի որ ըստ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանի պարզաբանման՝ «երկրում ձյան կամ հորդառատ տեղումներով պայմանավորված՝ գրանցվում են ՃՏՊ-ներ, որոնք մեծա մասամբ հետեւանք են վարորդների կողմից եղանակային պայմաններին չհամապատասխանող անվադողերով երթեւեկելու»:

Հիշեցնենք, որ այս կարգավորումը ուժի մեջ է մտել 2024 թվականի դեկտեմբերի 10-ից: Թե որքանով են վարորդները հետեւում այս որոշմանը, եւ թե որքանով են ճանապարհատրանսպորտային ոստիկանության եւ պարեկային ծառայության համապատասխան մարմինները վերահսկում իրավիճակը, ավելի արդիական դարձավ վերջին շրջանի ձյունառատ եղանակով պայմանավորված: Armlur.am-ը փորձեց պարզել, թե վերջին շրջանում քանի վարորդների կողմից է խախտվել ոչ ձմեռային անվադողերով երթեւեկելու պահանջը: Ներքին գործերի նախարարի մամուլի խոսնակ Նարեկ Գրիգորյանը Armlur.am-ի հարցին ի պատասխան նշել է, որ «2025 թվականի փետրվարի 1-ից մինչեւ փետրվարի 17-ը տրանսպորտային միջոցները չտեղադրված ձմեռային դողերով վարելու կանոնները խախտելու համար կազմվել են թվով 43 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ եւ կայացվել են համապատասխան որոշումներ»:

ԱՐՄԵՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

ԳԱԶԸ ԹԱՆԿԱՑԵԼ Է

Armlur.am-ի տեղեկություններով՝ ՀՀ-ում հեղուկ գազը կրկին կտրուկ թանկացել է: Armlur.am-ի խմբագրություն ահազանգած վարորդները հայտնեցին, որ վերջին օրերին հեղուկ գազը 140 դրամ է, իսկ երեկվանից տարբեր գազալցակայաններում այն արժի 200-210 դրամ: Թե ինչու են հեղուկ գազի շուկայում նման կտրուկ թանկացումներ, ինչու հայրենի կառավարությունը չի վերահսկում շուկան, արդեն տեւական ժամանակ է ոչ ոք չի կարողանում բացատրել: Իսկ հայրենի իշխանությունները այս հարցի առնչությամբ իրենց ձեռքերը լվացել են:

Armlur.am-ը կապ հաստատեց Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (ՏՄՊՀ) մամուլի խոսնակ Անի Սմբատյանի հետ՝ պարզելու համար, թե իրենք արդյոք վերահսկո՞ւմ են շուկան, ու հասկանալի՞ է, թե ի վերջո ինչու են նման թանկացումներ տիրում հեղուկ գազի շուկայում: «ՏՄՊՀ-ն ուսումնասիրում է շուկաները, որտեղ կան գերիշխող դիրք ունեցող ընկերություններ, իսկ հեղուկ գազի պարագայում դա առկա չէ. շուկան մրցակցային է, եւ այնտեղ ընկերությունների ամենաբարձր մասնաբաժինը 5 տոկոսի չի հասնում»,- մեզ հետ զրույցում հայտարարեց ՏՄՊՀ մամուլի խոսնակը: Ինչպես միշտ հարցերը մնում են անպատասխան, իսկ ՀՀ քաղաքացին իր խնդիրների հետ՝ միայնակ:

ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ՓԱԿՎԵԼ Է

ArmLur.am-ի տեղեկություններով Հայաստանում փակվել է NDI (National democratic institute)-ի գրասենյակը: Ամերիկյան կազմակերպությունը Հայաստանում ակտիվ գործունեություն էր վարում դեռեւս 1994 թվականից՝ կենտրոնանալով քաղաքական կուսակցություններին աջակցելու վրա՝ զարգացնելու երիտասարդական թեւերը, բարելավելու քարոզարշավի եւ իրազեկման հմտությունները, ստեղծելու միջկուսակցական դաշինքներ եւ սկսելու տեղական նախաձեռնողական ծրագրեր:

2018 թվականից NDI-ն սերտորեն համագործակցում էր կուսակցությունների, խորհրդարանական խմբակցությունների եւ քաղաքացիական հասարակության գործընկերների հետ՝ ամրապնդելու եւ պահպանելու ժողովրդավարական բարեփոխումների թափը: Այն սերտորեն համագործակցում էր USAID-ի հետ:

Հիշեցնենք, որ ԱՄՆ-ում Դոնալդ Թրամփի վարչակարգի իշխանության գալուց հետո ԱՄՆ արտաքին քաղաքականությունը փոխվել է, դադարեցվել են մի շարք ֆինանսավորումներ, այդ թվում՝ USAID-ի եւ մի շարք այլ կազմակերպությունների միջոցով իրականացվող ծրագրերի ֆինանսավորումները:

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆՈՒՄ Է

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմը հայտարարել է, որ դադարեցնում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ, USAID) արտաքին օգնության պայմանագրերի մոտ 90%-ը, ինչպես նաեւ, ընդհանուր առմամբ, 60 միլիարդ դոլարի ամերիկյան օգնությունն ամբողջ աշխարհում:

Ըստ հրապարակման՝ ԱՄՆ վարչակազմի կողմից հայտարարված կրճատումների պատճառով ԱՄՆ ՄԶԳ-ի շատ քիչ ծրագրեր կշարունակեն գոյությունը: Փաստաթղթերում նշվում է, որ նախատեսվում են ավելի շատ փոփոխություններ այն հարցի շուրջ, թե ինչպես են ԱՄՆ ՄԶԳ-ն եւ Պետքարտուղարությունը բաշխում արտաքին օգնությունը: Դրա նպատակն է «հարկատուների գումարներն օգտագործել ավելի խելամիտ կերպով՝ առաջ տանելու ամերիկյան շահերը»: Հունվարի 20-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի պաշտոնակալությունից հետո արտաքին օգնության կասեցման պատճառով դադարեցվել են արտերկրում ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորվող հազարավոր ծրագրեր, ԱՄՆ ՄԶԳ-ի աշխատակիցների մեծ մասը հեռացվել է աշխատանքից: USAID-ի միջոցով բաշխվող օտարերկրյա օգնության տրամադրումը դադարեցնելու պատճառով մի խումբ ոչ առեւտրային կազմակերպություններ դատական հայցեր են ներկայացրել Թրամփի վարչակազմի դեմ:

ՃՆՇՄԱՆ ՆԵՐՔՈ

ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը նախօրեին աշխատանքային այցով Թեհրանում էր, որտեղ մի շարք հանդիպումներից հետո նաեւ համատեղ ասուլիս ունեցավ իր իրանցի գործընկեր Աբբաս Արաղչիի հետ: Ըստ Լավրովի եւ Արաղչիի՝ կողմերն անդրադարձել են տարբեր տարածաշրջանների զարգացումներին՝ քննարկելով էներգետիկ, երկաթուղային, գյուղատնտեսական, առեւտրային, զբոսաշրջային ոլորտներում համագործակցությունն, ինչպես նաեւ առկա խնդիրները: Իրանցի եւ ռուսաստանցի պաշտոնյաները բանակցությունները շատ դրական եւ արդյունավետ որակեցին՝ արձանագրելով մի շարք ռեգիոններում բավականին մոտ դիրքորոշումներ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող իրադարձություններին՝ Սիրիա, պաղեստինաիսրայելական հակամարտություն, Լիբանան, Աֆղանստան, ինչպես նաեւ պատերազմ Ուկրաինայում, Իրանի միջուկային ծրագիր, Հյուսիս-Հարավ՝ Ռեշտ-Աստարա երկաթուղի եւ զարգացումներ Կովկասում: Լավրովի խոսքով Մոսկվայի ու Թեհրանի միջեւ քաղաքական երկխոսությունը գտնվում է «հիանալի մակարդակում», ակտիվորեն զարգանում են տնտեսական կապերը, առեւտրաշրջանառությունն աճել է 13 տոկոսով: Ռուսաստանի Դաշնության ԱԳ նախարարը հույս հայտնեց, որ այդ միտումը կշարունակվի նաեւ ապագայում: Նախարարներն անդրադարձան պատժամիջոցների խնդրին՝ պատրաստակամություն հայտնելով շարունակել առարկայական աշխատանքը երկու երկրների տնտեսությունների վրա սահմանափակումների ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար:

ՉԵՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԿԵՂԾ ՕՐԱԿԱՐԳ Է

Վերջին շրջանում հայկական քաղաքական դաշտում ամենից շատ քննարկվող թեմաներից մեկը Նիկոլ Փաշինյանի «իրական Հայաստանի» գաղափարախոսության վերաբերյալ ուղերձն էր: Քաղաքական դաշտում լրացուցիչ ակտիվություն մտցրեց հատկապես վարչապետի պնդումը նոր Սահմանադրության ընդունման անհրաժեշտության վերաբերյալ:

Վարչապետի ուղերձի, գաղափարախոսության եւ հնարավոր նոր Սահմանադրության վերաբերյալ «Ժողովուրդ»-ը զրուցել է «Լուսավոր Հայաստան» կուսակցության անդամ, նախկին պատգամավոր Անի Սամսոնյանի հետ:

Ըստ նրա՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գաղափարախոսական ուղերձում չկար գաղափարախոսություն. դա, գործչի համոզմամբ, Փաշինյանի կառավարման տարիների ընթացքում արված ձախողումների եւ պարտությունների արդարացման շարադրանքն էր:

Ըստ մեր զրուցակցի դիտարկման՝ «չկա որեւէ գաղափարախոսություն, որը կարող է հիմք դառնալ Սահմանադրության նոր տեքստ ընդունելու համար»: Սամսոնյանը կիսում է այս ընթացքում շատ հանրային եւ քաղաքական գործիչների կողմից հնչեցված մտավախությունը, որ նոր Սահմանադրության ընդունման անհրաժեշտությունը գալիս է ադրբեջանական պահանջներից: Սամսոնյանը հիշեցնում է, որ նախկինում կար սահմանադրական փոփոխությունների օրակարգ. դեռ 2018 թ. հեղափոխությունից հետո, որը հիմնականում բարձրաձայնվում էր այդ շրջանում ընդդիմադիրների կողմից: Այդ օրակարգը բարձրացնում էին, քանի որ 2015 թ. ընդունված Սահմանադրական փոփոխությունները, ըստ Սամսոնյանի, կատարվել էին Սերժ Սարգսյանի «սուպերվարչապետական համակարգի» համար, սակայն իշխանությունները չունեին բավարար կամք՝ հրաժարվելու «Սերժ Սարգսյանի համար կարված կոստյումից»: Սամսոնյանը հիշեցնում է, որ նախկինում էլ ստեղծվել են մի քանի հանձնաժողովներ, բայց առանց որոշակի տեսանելի արդյունքի: Սակայն, երբ Ադրբեջանը բաց տեքստով սկսեց պահանջել, որ Հայաստանը պետք է փոխի Սահմանադրությունը, իշխանությունները նորից սկսեցին խոսել Սահմանադրության մասին, բայց արդեն ոչ թե փոփոխություններ կատարելու, այլ Սահմանադրության նոր տեքստ ընդունելու:

Այս գործընթացը տարվում է, քանի որ Ադրբեջանի պահանջը վերաբերում է ոչ թե սահմանադրական փոփոխություններին, այլ լրիվ նոր Սահմանադրության տեքստ ընդունելուն՝ առանց Սահմանադրության նախաբանի, որում հղում կա Անկախության հռչակագրին: Հետեւաբար, Անի Սամսոնյանը, եզրակացնում է. «Հայ ժողովուրդը չպետք է կատարի այդ պահանջը եւ չպետք է մասնակցի այդ գործընթացին»: Սամսոնյանը քաղաքացիներին եւ քաղաքական ուժերին կոչ է անում վարվել այնպես, ինչպես ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանը վարվում էր 2015 թ. Սահմանադրական փոփոխությունների նպատակով արվող քարոզարշավի ժամանակ՝ անվանելով դա «կեղծ օրակարգ» եւ չմասնակցելով դրան:

«Հիմա մենք բոլորս պետք է լսենք Նիկոլ Փաշինյանին, եւ ասենք, որ նոր ընդունվող Սահմանադրության տեքստը կեղծ օրակարգ է, եւ մենք այդ գործընթացին չենք մասնակցում» - նշեց Անի Սամսոնյանը:

ԱՐՄԵՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ

Իգոր Տիտովը դարձել է Ռուսաստանի նոր գլխավոր հյուպատոսը Գյումրիում: «Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի հրամանով Իգոր Բորիսի Տիտովը Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքում նշանակվել է ՌԴ գլխավոր հյուպատոս: 2024-2025 թվականներին նա ղեկավարել է Կապանում ՌԴ գլխավոր հյուպատոսության բացման առաջնային խումբը», - այս մասին ասված է ՌԴ ԱԳՆ հաղորդագրության մեջ: 2024թ. նոյեմբերին Հայաստանում Ռուսաստանի դեսպանությունը հայտնել էր, որ մահացել է Գյումրիում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Ռուսլան Կանդաուրովը:

ԵՄ-Ն ԿՊԱՏԱՍԽԱՆԻ

Եվրամիությունն առաջիկայում վճռականորեն կպատասխանի ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի խոստացած եվրոպական ապրանքների 25 տոկոս մաքսատուրքերին: Այս մասին նշվել է Եվրահանձնաժողովի (ԵՀ) տարածած հայտարարությունում: «ԵՀ-ն անմիջապես եւ վճռականորեն կպատասխանի [ԱՄՆ] մաքսատուրքերին»,- նշվել է փաստաթղթում: ԵՀ-ն նաեւ մեկնաբանել է Թրամփի խոսքերն այն մասին, որ ԵՄ-ն «ստեղծվել է Միացյալ Նահանգներին շահագործելու համար, եւ դա հաջողությամբ է արել»: Բրյուսելը հանդես է եկել հայտարարությամբ, որ Եվրամիությունն «աշխարհի ամենամեծ շուկան է», ինչը «մեծ հաջողություն է ԱՄՆ-ի համար»:

ԱՄՓՈՓՎԵԼ Է

Պետական եկամուտների կոմիտեի փոխանցմամբ՝ ամփոփվել է 2024 թվականի համար միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած հարկ վճարողների մասին տեղեկատվությունը: 2024 թվականի համար միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու մասին հայտարարություն է ներկայացրել 57.773 հարկ վճարող:

ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

ArmLur.am-ը իրավապաշտպան Ռուբեն Մելիքյանի հետ զրուցել է հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանի դեմ հարուցված քրեական գործից, թե ինչ է լինելու, եթե նախքննական մարմինը չտրամադրի այն դատավորների, դատախազների, քննիչների, հարկադիր կատարողների տվյալները, ինչպես պետք է այս անորոշ իրավիճակում կատարեն դատարանի պահանջը: ArmLur.am-ի հետ զրույցի ընթացքում Ռուբեն Մելիքյանը անդրադարձավ Արմեն Գրիգորյանի մահվան դեպքով հարուցված քրեական վարույթին, ինչպես նաեւ հայտնեց, որ ԱԺ նախկին պատգամավոր Հակոբ Ասլանյանի եւ Սամվել Վարդանյանի հետ միջադեպի գործով, Սամվել Վարդանյանի խոշտանգման, տաբատը իջեցնելու, վրան թքելու դեպքով կոմիտեն ստացել է եզրակացությունը:

ՀԱՎԱՔ՝ԱԳՆ-Ի ԴԻՄԱՑ

Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ArmLur.am-ը երեկ զրուցել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի հետ: Հետաքրքրվեցինք, արդյոք տեսե՞լ է Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանի լուսանկարները: Ի՞նչ քայլեր է ձեռնարկել Մարդու իրավունքների պաշտպանը Վարդանյանի խոշտանգման եւ կաղտուկներով լուսանկարների ի հայտ գալուց հետո: Նկատենք, որ Ռուբեն Վարդանյանը Բաքվում ընթացող դատավարություններին զուգահեռ խոշտանգվել եւ բռնության է ենթարկվել: Մեր հարցին ի պատասխան՝ նախարարը պատասխանեց. «Հարցի հետ կապված մեկնաբանություններ տալ չեմ կարող: Ձեր կարծիքով Ձեր սիրտն ավելի է ցավում, քան Կառավարության կազմում գտնվող անձա՞նց»:

ArmLur.am-ը նկատել էր, որ շինծու դատավարությանը զուգահեռ Ռուբեն Վարդանյանն ակնհայտ ծեծի է ենթարկվել: Դատավարությունից հրապարակված լուսանկարներից ակնհայտ երեւում են Վարդանյանի մարմնի տարբեր մասերի կապտուկները: Սրա մասին գեթ մեկ պաշտոնյա չի խոսել եւ գերիների խոսշանգման հարց չի բարձրացրել:

Ռուբեն Վարդանյանի որդին նախօրեին հանդես եկավ ուղերձով եւ կոչ արեց պայքարել Բաքվում տեղի ունեցող ցուցադրական դատավարությունների դեմ՝ ընդդեմ իր հոր եւ մնացած հայրենակիցների, ովքեր ամեն ինչ տվել են Արցախի ազատության համար:

Ավելի ուշ հարցին արձագաքեց ՀՀ ՄԻՊ-ը. «Ոլորտում մանդատ ունեցող բոլոր դերակատարները պետք է շուտափույթ եւ պատշաճ քայլեր ձեռնարկեն խնդրի հասցեավորման ուղղությամբ»: Հայտնեցի Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից՝ անդրադառնալով Ադրբեջանում ազատությունից ապօրինի զրկված հայերի նկատմամբ իրականացվող գործընթացներին, մասնավորապես՝ Ռուբեն Վարդանյանի առողջական վիճակի վատթարացմանն ու խոշտանգմանը: «Սոցիալական մեդիայի մշտադիտարկումների արդյունքում մտահոգիչ տեղեկություններ են ստացվել Ռուբեն Վարդանյանի առողջական վիճակի վատթարացման եւ խոշտանգման մասին: Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս է խոսել Ադրբեջանում ազատությունից ապօրինի զրկված հայերի նկատմամբ իրականացվող գործընթացների ոչ թե պարզապես խնդրահարույց լինելու, այլ մարդու իրավունքների համընդհանուր սկզբունքների ու արժեքների, միջազգային իրավական չափանիշների կոպտագույն խախտումներով իրականացվելու մասին: Իրավիճակի հետ կապված՝ Անահիտ Մանասյանի հանձնարարությամբ աշխատակազմում իրականացվել են եւ շարունակվում են իրականացվել համապատասխան քայլեր ՄԻՊ լիազորությունների շրջանակներում»,- հայտնեցին ՄԻՊ-ի գրասենյակից:

Ավելացնենք, որ համացանցում արշավ է սկսվել Ռուբեն Վարդանյանի տարածված լուսանկարների եւ որդու կոչից հետո:

Երեկ՝ ժամը 12:00-ին, բոլոր սրտացավ քաղաքացիները հավաքվել էին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիմաց՝Հայաստանի արտաքին քաղաքականության պատասխանատու կառույցից պահանջելու հանդես գալ հրատապ հայտարարությամբ եւ Հայաստան հրավիրել հավատարմագրված դիվանագետների հավաք: Հայաստանի Կառավարության եւ միջազգային հանրության լռությունն ուղղակի աջակցություն է Ադրբեջանի վայրագություններին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԱՅԵԼԻՆԵՐ Է ԳՈՂԱՑԵԼ

Փետրվարի 25-ին ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն է զանգահարել 38-ամյա մի քաղաքացի եւ հայտնել, որ ժամը 13:30-ից 14:20-ն ընկած ժամանակահատվածում գողացել են Մոլդովական փողոցի շենքերից մեկի բակում կայանված իր «Հյունդայի Էլանտրա» մակնիշի մեքենայի կողային հայելին:

Այս մասին հայտնում են ՆԳՆ ոստիկանությունից՝նշելով, որ համայնքային ոստիկանության Նոր Նորքի բաժնում կազմված փաստաթղթերն ուղարկվել էին քննչական բաժին: «Համայնքային ոստիկանության Մալաթիայի բաժնի ծառայողները, իրացնելով ստացված օպերատիվ տվյալները, փետրվարի 25-ին՝ժամը 16:15-ին, Ավան-Առինջ թաղամասի շենքերից մեկում հայտնաբերել, գողության կասկածանքով ձերբակալել եւ Մալաթիայի բաժին են տեղափոխել նույն շենքի բնակիչ 33-ամյա մի տղամարդու: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է տարբեր մակնիշի մեքենաների հինգ կողային հայելի: Պարզվել է, որ հայելիներից մեկը «Հյունդայի Էլանտրա» մակնիշի մեքենայինն է: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Նոր Նորքի քննչական բաժին»,-ասվում է հաղորդագրության մեջ:

ԱՊՕՐԻՆԻ ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔ

Փետրվարի 26-ին քրեական ոստիկանության Շիրակի մարզային վարչությունում տեղեկություններ էին ստացվել, որ Գյումրի քաղաքի 33-ամյա բնակիչը իր մոտ եւ տանը ապօրինի կերպով պահում է զենք-զինամթերք: Նա հրավիրվել է մարզային վարչություն, որտեղ հայտնել է, որ տանը պահում է գազային ատրճանակ, որը պատրաստ է ներկայացնել: Նախաձեռնվել է քրեական վարույթ: Երիտասարդը ննջասենյակից ներկայացրել է ապօրինի պահվող «Մակարովի» նմանվող գազային ատրճանակ: Գյումրեցի 33-ամյա երիտասարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Շիրակի մարզային քննչական վարչություն:

ԼՈՒՐ ՉԿԱ

Արդեն 6 օր է (27.02.25 տվյալներով), ինչ Վարդան Ղուկասյանի գտնվելու վայրը մնում է անհայտ: Այս մասին հայտարարություն է տարածել ԴՕԿ կուսակցությունը: «Մեզ փոխանցված տեղեկությունները, ըստ որոնց նա գտնվում է հիվանդանոցում, չեն հաստատվում, ինչը խորացնում է մտահոգությունը: Կոչ ենք անում բոլոր այն հայրենակիցներին, ովքեր անհանգստանում են եւ գտնվում են արտերկրում, հավաքվել իրենց երկրներում ԱՄՆ դեսպանատան մոտ եւ պահանջել հստակ պատասխան. որտե՞ղ է Վարդան Ղուկասյանը: Շուտով հանդես կգանք հստակ հայտարարությամբ՝ ներկայացնելով իրավիճակի ամբողջական մանրամասները», - նշված է հայտարարության մեջ: Հիշեցնենք, որ օրեր առաջ հայտարարվել էր, որ Վարդան Ղուկասյանի առողջական վիճակը կտրուկ վատացել է եւ նրան շտապօգնության մեքենայով տեղափոխել են հիվանդանոց:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԾԱՅՐԱՀԵՂ ԾԱՆՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Օրեր առաջ արտառոց դեպք է տեղի ունեցել Լոռու մարզում. ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Ստեփանավանի բաժնում տեղեկություն է ստացվել, որ Լոռու մարզի բնակիչ 2,5-ամյա Վ. Կ.-ն գտնվում է ծայրահեղ անխնամ վիճակում, տնային պայմանները խիստ անբավարար են, ինչը կարող է վտանգ սպառնալ երեխայի կյանքի եւ առողջության համար:

Արդեն փետրվարի 21-ին համայնքային ոստիկան Եղինյանը, սոցաշխատակից Ալվարդ Դավոյանի, տեղամասի մանկաբույժ Հասմիկ Մուրադյանի հետ կատարված համատեղ տնայցի ժամանակ պարզել են, որ անչափահաս երեխան գտնվում է անխնամ վիճակում, տանը բացակայում են կոմունալ բոլոր նվազագույն պայմանները, տունը ընդհանրապես ջեռուցված չի եղել: Մանկաբույժը երեխաների ծնողներին, Լոռու մարզի բնակիչներ 33-ամյա Անի Կ.-ին եւ ամուսնուն՝59-ամյա Վաչագան Ջ-ին տեղեկացրել է, որ երեխային անհրաժեշտ է բուժհետազոտություն եւ բուժում, սակայն նրանք հրաժարվել են երեխային բուժզննման նպատակով հիվանդանոց տանելուց, որից հետո մանկաբույժի ուղեկցությամբ երեխան առանց ծնողների շտապօգնության ավտոմեքենայով տեղափոխվել է «Ստեփանավան» բժշկական կենտրոն, որտեղ անչափահաս երեխայի մոտ ախտորոշվել է «երկկողմանի մանր օջախային թոքաբորբ, զույգ դաստակների եւ զույգ ոտնաթաթերի առաջին աստիճանի ցրտահարություն»: Դեպքի փաստով ոստիկանության Ստեփանավանի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժին:

Քրեական վարույթ է նախաձեռնվել ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի առաջին մասի (Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որը հանգեցրել է երեխայի առողջության վատթարացման) հատկանիշներով, որով կա մեկ տուժող, այս պահին կատարվում է նախաքննություն:

ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ ՄԱՀԱՑԵԼ Է

«Առողջություն եւ իրավունք» ՀԿ համահիմնադիր, իրավապաշտպան Անուշ Պողոսյանը սոցցանցի իր էջում գրել է. «Հերթական մահվան դեպքը պլաստիկ վիրահատության հետեւանքով: Ըստ հավաստի աղբյուրների՝ սույն տարվա փետրվարին «Ուիգմոր» բժշկական կենտրոնում արձանագրվել է պլաստիկ վիրահատության հետեւանքով ողբերգական մահվան դեպք: Մ.Մ.-ն ընդունվել է «Ուիգմոր» փետրվարի 18-ին՝ ակնկալիքներով, որ պլաստիկ վիրահատություններից հետո դուրս է գրվելու ավելի գեղեցիկ եւ կատարյալ ֆիզիկական վիճակում: Հավելենք, որ տիկինը քրոնիկական հիվանդություններով չի տառապել, առողջության հետ կապված խնդիրներ, բողոքներ չի ունեցել: Մ.Մ.-ին «Ուիգմորում» կատարել են սիմուլտան (համակցված) վիրահատություններ՝ որովայնի պլաստիկա եւ զուգահեռ եւս մեկ այլ տեղակայման պլաստիկ վիրահատական միջամտություն: Հիվանդի վիճակը հետվիրահատական 2-րդ օրը կտրուկ վատացել է, նրան տեղափոխել են վերակենդանացման բաժանմունք, որտեղ հիվանդի վիճակը էլ ավելի է վատացել, գնահատվել է ծայրահեղ ծանր, հաջորդիվ՝ փետրվարի 21-ին, նրան տեղափոխել են «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունք, որտեղ նույն օրը երեկոյան՝ ժամը 23:30-ի սահմաններում, Մ.Մ.-ի մոտ արձանագրվել է կենսաբանական մահ: Այսպիսով, հերթական անգամ հայաստանյան առողջապահությունում կինը գեղեցիկ եւ ֆիզիկապես կատարյալ լինելու նպատակով դիմում է բժշկական կենտրոն եւ այլեւս տուն չի վերադառնում: Արձանագրվում է մահ», - ամփոփել է իրավապաշտպանը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 26-ից 27-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 131 դեպք, որից 7-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

55 ՈՒՍՈՒՑՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼ ԵՆ

Տավուշի մարզպետարանի տվյալներով՝ 2023-2024 ուսումնական տարվա շեմին եւ ուսումնական տարվա ընթացքում, բուհի դիպլոմ չունենալու պատճառով, աշխատանքից ազատվել է Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում աշխատող 55 ուսուցիչ: Նրանք թեեւ չունեն բուհի դիպլոմ, ունեն միջնակարգ մասնագիտական կրթական հաստատության դիպլոմ, սակայն նրանցից շատերը երկար տարիների մանկավարժական աշխատանքի հաջողված փորձ ունեն: Բուհի դիպլոմ չունեցող 55 ուսուցիչների աշխատանքից ազատել են, ու հիմա ուսուցիչներ են որոնում, մարզի դպրոցներում բազում թափուր հաստիքներ կան: Վերջերս ուսուցիչների թափուր հաստիքները զբաղեցնելու մրցույթներ էին հայտարարվել Դիլիջան համայնքի Հովքի եւ Բերդ համայնքի Վերին Ծաղկավանի միջնակարգ դպրոցներում: Սակայն դրանք փաստացի չկայացան, որովհետեւ դրանց մասնակցողներ չեղան, միայն Վերին Ծաղկավանի ՆՔՊ-ի ուսուցչի թափուր հաստիքը զբաղեցվեց: Մարզի հանրակրթական դպրոցներում տարեց, կենսաթոշակառու շատ ուսուցիչներ շարունակում են աշխատել: Տավուշի մարզպետարանից տեղեկացել ենք, որ Տավուշի մարզի 76 հանրակրթական ուսումնական հաստատություններում այժմ աշխատում է 227 թոշակառու ուսուցիչ եւ 11 թոշակառու փոխտնօրեն: Տավուշի մարզպետարանից նաեւ հայտնել են, որ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում է ընդհանուր թվով 1634 ուսուցիչ եւ 161 ուսուցչի օգնական: Մարզպետարանից մեր թղթակցին հայտնել են, որ հանրակրթական դպրոցների ուսուցչի մեկ դրույքաչափը միջինում կազմում է 130 հազար դրամ, կամավոր ատեստավորված ուսուցչի աշխատավարձը՝ 200 հազար դրամ, որին ավելանում է համապատասխան հավելավճար: Տավուշի մարզից որոշ ուսուցիչներ համաձայն չեն դրույքաչափի միջին չափի մասին մարզպետարանի տրամադրած տվյալին. նրանք ասում են, որ Հայաստանի հանրակրթական դպրոցների 89%-ում ուսուցիչների դրույքաչափը 119 հազար 808 դրամ է: Նոյեմբերյան համայնքի Զորական գյուղի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Արեւիկ Բաղիրյանը ասում է. «Կամավոր ատեստավորման արդյունքում դրույքաչափի փոփոխություն եւ հավելավճարի իրավունք եմ արձանագրել, սակայն շարունակում եմ ստանալ նախկին աշխատավարձս: 2024 թվականի նոյեմբերի 17-ին եմ հանձնել: Նախարարի հրամանի համաձայն՝ նոր դրույքաչափով վարձատրումը 2025 թվականի հունվարից է նախատեսվում: 2025 թվականի հունվարի աշխատավարձը ստացել եմ նախկին դրույքաչափով՝ առանց հավելավճարի»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓԱՍՏԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԿԵՂԾ ՀՐԱՄԱՆԸ

Հանրապետությունում փետրվարի 20-ից տեղացած առատ ձյունը անհարմարություններ ստեղծեց ոչ միայն մարդկանց տեղաշարժի, դպրոցներ, բուհեր հաճախելու առումով, այլ նաեւ շատ մարդիկ առատ ձյան ու սառույցի պատճառով սահում, վայր էին ընկնում, վնասվում և դիմում հիվանդանոցներ: Առողջապահության նախարարը իր ֆեյսբուքյան էջում փետրվարի 20-ին շտապեց գրել. «տեղեկացնում ենք, որ որոշում ենք կայացրել նման դեպքերի բուժման հետ կապված ծախսերը փոխհատուցել պետական պատվերի ծավալով՝ անկախ սոցիալական կարգավիճակից:

Սակայն ArmLur.am-ը պարզեց, որ 2019 թվականից բազմապրոֆիլ (մեծ) հիվանդանոցներում գործում են ընդունարանի անհետաձգելի բժշկական օգնության բաժիններ՝ «ԷՄԵՐՋԵՆՍԻ», որտեղ անկախ եղանակային պայմաններից եւ քաղաքացիների սոցիալական վիճակից վնասվածք ստացած անձինք, մասնավորապես՝ կտրած վերքեր, հոդախախտեր, ոսկրերի կոտրվածքներ, անհետաձգելի արտահիվանդանոցային բժշկական օգնություն եւ սպասարկում են ստանում պետական պատվերով, իսկ հատուկ եւ դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների եւ նորագույն եւ թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունները, ըստ ցուցումների, մատուցվում են անվճար սոցիալապես անապահով եւ հատուկ խմբերում ընդգրկված պացիենտներին՝ համաձայն ՀՀ ԱՆ 2019 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 44-Ն հրաման:

Հիվանդանոցային դեպքերը, բացի վերակենդանացման բաժնում բուժօգնություն ստացողներից, բուժվում են համավճարային սկզբունքով:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ միայն փետրվարի 24-ին՝ իր հայտարարությունից 4 օր անց, առողջապահության նախարարը արձակեց լոկալ (ներքին) հրաման, որտեղ ամրագրված է, որ ձյան առատ տեղումների պատճառով վնասվածք ստացած քաղաքացիների դժվարամատչելի հետազոտությունները կիրականացվեն անվճար, ինչպես նաեւ վիրահատության ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաները կտեղադրվեն անվճար՝ պետական պատվերով, սակայն այն դեպքում, երբ բժշկական կենտրոնը դիմի առողջապահության նախարարությանը: Հրամանում որեւէ խոսք չկա վիրահատությունների ժամանակ քաղաքացիների կողմից վճարվող համավճարի մասին:

Հարկ է նշել, որ հանրությունը այս կարգավորումից անտեղյակ է, եւ ձնառատ օրերին վնասվածք ստացած Հայաստանի քաղաքացիները բժշկական կենտրոններում ԿՏ, ՄՌՏ եւ այլ հետազոտությունների, վիրահատական միջամտությունների համար հիմնականում վճարել են:

Ստացվում է, որ առատ ձյան հետ կապված հանրային դժգոհությունները պարպելու համար քաղաքական թիմին աջակցություն ցուցաբերած առողջապահության նախարարի ֆեյսբուքյան գրառումը, մեղմ ասած, իրականությանը չի համապատասխանում: Այն ընդամենը պոպուլիստական հերթական քայլն էր:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ



http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184493 1/5

ARLIS

Համարը N 65 Հ.

Տեսակը Պաշտոնական Ինֆորմացիա

Տիպը Հրաման

Պետական գրանցում Կարգավիճակը Գործում է

Սկզբնաղբյուրը 27745 2014 01 15/7(481) 7-ով 18

Ընդունման վայրը Երեւան

Ընդունման ամսաթիվը 18.10.2013

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 25.01.2014

Կորցնելու ամսաթիվը

Տեսակը ուշ փաստաթղթերի հետ

Փոփոխումներ և լրացումներ չունի

ՀՀ ՈՒՆԵՑԻԱԼՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆ

18 հոկտեմբերի 2013 թ. Ք. Երեւան N 65 Ն

ՀՐԱՄԱՆ

ԲԵՆԶԻՆԱՅԻՆ (18 ՏԱՐԵԱՆ ԵՎ ԱՎԵԼԻ ՀԱՍԱԿ) ՊԵՏՈՒ ԳՈՒՄԱՐԻ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԱՎԱԳԱՆ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԼՏԵՐՆԱՏԻՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՑԱՆԿԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՄԱՍԻՆ

(վերջին փոփ. թվ. 24.10.22 N 71-Ն)

Հրամայում եմ՝

1. Սահմանել՝

1) բենզինային (18 տարեանի եւ բարձր տարիքի սահմանց հասնող) սախտ-թանկիկ կոշտաբանական սեռերը պարտադիրով հիվանդությունների պարտադիրով սահմանազանցի բժշկական օգնության եւ սպասարկման պահանջող

http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184493 2/5

հիվանդությունների և վիճակների ցանկը՝ համաձայն հավելված 1-ի.

7) բնակչությունը (38 տարեկան և բարձր տարիքի սահմանց հասնող) պատասխան կրկնվող կրաշարժերների սպասարկում պարտադիր հիվանդությունների պարտադիրով սահմանազանցի բժշկական օգնության և սպասարկման պահանջող հիվանդությունների և վիճակների ցանկը՝ համաձայն հավելված 2-ի.

(1-ին կետ փոփ., խմբ. 24.10.22 N 71-Ն)

2. Սահմանել, որ սահմանազանցի բժշկական օգնությունն և սպասարկումը կազմակերպում է սահմանազանցի բժշկական սկզբնական սանիտարական հիվանդությունների և վիճակների բժշկական օգնության և սպասարկման

Հ. Դանիելյան

Հավելված 1
ՀՀ առողջապահության նախարարի
2013 թվականի հոկտեմբերի 18-ի
N 65-Ն հրամանի

ՑԱՆԿ

ԲԵՆԶԻՆԱՅԻՆ (18 ՏԱՐԵԱՆ ԵՎ ԱՎԵԼԻ ՀԱՍԱԿ) ՊԵՏՈՒ ԳՈՒՄԱՐԻ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԱՎԱԳԱՆ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԼՏԵՐՆԱՏԻՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՑԱՆԿԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆԵՐԻ

(վերջին փոփ. խմբ. 24.10.22 N 71-Ն)

1. Վերակենդանացման միջոցառումներ և հուսալիորեն թեթեւացնող պահանջող հիվանդությունների և վիճակների՝
1) շոկային վիճակներ 2-րդ և ավելի աստիճանի,
2) կոմատոզ վիճակներ,
3) պերտոպլաստիկային կոտոր (3 տարեւ վերջ),
4) սուր շեղատական սեռատարաբանություն՝
ա. սուր հիպերտենզիվ շեղատական սեռատարաբանություն (զարկերակային արյան բարձրացումը մեծանում (PaO2) իջեցում 60 միլիմետր սնդիկի պակաս), կամ
բ. սուր թեթեւացնող շեղատական սեռատարաբանություն (զարկերակային արյան սահմանում պակաս պայմանով մեծանում (PaCO2) բարձրացում 50 միլիմետր սնդիկի պակաս և ավելի). բացառությամբ բրոնքի ոլորձիկների պատճառներով հիվանդությունի (ԲՈՕՀ) սուր սրացման պատճառով, կամ
գ. կրկնային սեռատարաբանություն սուր շեղատական սեռատարաբանություն PaO2 և սուր սրացման պատճառով,
4.1) սուր հարբեցողի 1-ին կիսի 6-րդ հիպոկիսի՝ «բ» պարբերության «կրկնային սեռատարաբանություն սուր շեղատական սեռատարաբանություն» հատվածը սուր «բ», «գ», «դ» և «ե» պարբերությունների կրկնությունները կրկնությունների կրկնությունների սեռատարաբանությունների պատճառով ինքնաբերաբար ստեղծում բարդություններ
տ. շեղատական հատկանիշների բարդությունների սրացում,
ե. գիտակցության մեղմացումի հատկանիշների սրացում,
զ. ստամոքսային արյան բարձրանում հատկանիշներում (SpO2) 88-ից 92% FiO2 ≤60% պարմանիում,
դ. զարկերակային արյան սահմանում պակաս պայմանով մեծանում (PaCO2) >60 միլիմետր սնդիկի պակաս (նկարագրված հատկանիշ բարդությունների մեծացումով),
1. սոնիրակի սարքավորման (լիտ. «Հ.Ռ»),
5) սրտի փորոքների ֆիբրիլյացիան և թրթռում Առանձնահատկի մեկ, սրտի կոնոս,
6) ենթադրեն թոքանդամների (ասիրեցությամբ՝ 1 օրվա գնով, կենդանիների հարթոցիկ, դեղորայքային և քիմիական նյութերով թունավորվածներ).
7) կոլլապսային սառատան, պերտոնիտյան կրաստով.
8) ծանր սեռամանկի ազդեցությունս և Լյուսոպոս,
9) տարբեր տեսակի էնդոդեռմիտ,
10) HELLP-համանմանություն (հեմոլիզ, լյարդի ֆերմենտների բարձրացում, թրոմբոցիտների քանակի իջեցում),
11) պրոսպերական սառ թեթեւացնող,
12) լեռնաբնակ նեմատոդիկ ջրելմիկ.
13) պրոլիֆերատիվ ինտրոտ տեքստի հիվամ հնարքի գարտնիկի համակարգի վիրահատիկներ,
14) գրասենյարարան 3 բդ սառանվանի,
15) մասնակի արտաքին ծանրության դեպքերներ 1-ին աստիճանի մասնակի 50 տոկոսից ավելի մեծությամբ, 2-րդ աստիճանի մասնակի 10 տոկոսից ավելի մակերեսով, 3-րդ, 4-րդ աստիճանների պրոցեսներ մասնակի է սակաս և ավելի մեծությամբ



http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=197929 2/10

Ա. Թոքմաջյան

Հավելված 1
ՀՀ առողջապահության նախարարի
2019 թ. հոկտեմբերի 18-ի N 44-Ն
հրամանի

ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԼՏԵՐՆԱՏԻՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՑԱՆԿԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ, ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՑԱՆԿԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(վերջին փոփ. խմբ. 21.02.20 N 08-Ն, 03.05.22 N 24-Ն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն բնութագրվող նորաստեղծիրում են հիվանդությունների պարամետրերում բժշկական օգնության և սպասարկում իրականացնող կազմակերպությունների տեղատարածական պայմանների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման հետ կապված հարցերը:

2. Հիվանդությունների պարամետրերում բժշկական օգնության և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ընդհանուր, գործող բժշկական հատատատության բոժոնների և անհատական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման հարցերում:

3. Հիվանդությունների պարամետրերում բժշկական օգնության և սպասարկում իրականացնող կազմակերպությունների մեջ հիվանդությունների պարամետրերում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման հարցերում:

4. Սույն բնութագրվող դրույթները չեն տարածվում հիվանդությունների պարամետրերում բժշկական օգնության և սպասարկման մասին օրենքի 28 բդ հոդվածի 1 մասում նշված հիվանդությունների պարամետրերում Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 21 ի թիվ 65 Ն. որոշման տեսանանման կարգով հաստատված հանրապետական հանձնաժողովներ հիվանդությունների հետազոտում:

5. Արտասահմանյան հիվանդությունների, անհայտնի պատճառներով հիվանդությունների ախտանիշների կամ դրսեւորումների դեպքում (հետագայում՝ հիվանդություններ) ստացված հիվանդությունների հետազոտման, բուժման նպատակով հիվանդությունների պարամետրերում բժշկական կազմակերպությունների բուժումնային գործունեությունը կարգավորվում է սույն հրամանով սահմանված դրույթներով:

(15 բդ կետ փոփ. 30.05.23 N 27 Ն.)

16. Հիվանդությունների բնակարանային բաժանմունքներում հիվանդությունների բուժումնանպատակ բժշկական կազմակերպությունների դեպքում բուժման ընթացքում բոլոր պայմանները, հանգամանքները հիվանդությունների վերաբերյալ՝ մշտական վարակից հիվանդությունների անհանգիստ նեղությունները գնալուց և այլ մասնակցությունը, գնալուցներ պարզաբանում է պարզեցնելիորեն սուտ փորձարկելիորեն բոլորը ընդհանրապես պարզապես ինչ կարելի է հիվանդությունների պարամետրերում ինչ կարելի է հիվանդությունների պարամետրերում ինչ, որտեղ, ինչպես, ինչպիսի, ինչ հետ, վարակիչ հիվանդությունն կատարման դեպքում, բուժումնանպատակի նրանց մասնակցությունը, ինչպիսի հիվանդությունների դեպքում, ինչպիսի հիվանդությունների կատարման դեպքում, բուժումնանպատակի նրանց մասնակցությունը:

1) Անհրաժեշտ պայմանների Հիվանդությունի մեջ հիվանդությունների մասնակցությունը (ոչ պակաս, քան 24 ժամ), մինչեւ պետությունն մշտական,
2) կրկնվելուցիկ բարդ սանիտարական հիվանդությունների և հանգամանքների բժշկի մասնակցությունի իրականացումը,
3) վիրաբոյնի հիվանդությունների հանգամանքների հետազոտությունների և հանգամանքների հետազոտությունների ինչ հարցերի բուժումնանպատակի բուժման հետ կապված հարցերի մասնակցությունի հետազոտությունների հետազոտությունների հետազոտությունների

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏՈՒԳԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԿԲԱՐՁՐԱՑՎԵՆ

Երեկ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանը խոսել է վարորդներին ամեն տարի տրամադրվող բալային միավորներից: «Ինչպես գիտեք, տրանսպորտային միջոցների վարորդներին յուրաքանչյուր տարի տրամադրվում է 9 տուգանային միավոր ու խախտումների քանակից ելնելով՝ միավորները պակասում են, եւ եթե դրանք զրոյացվում են, ապա կասեցվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը: Նախագծով 9 տուգանային միավորի փոխարեն նախատեսվում է 13 միավոր, ու եթե մենք դարձնում ենք 13 միավոր, ապա որոշակի առումով նվազում է նաեւ խախտումների համար նախատեսված պատժի չափը, հետեւաբար, հավասարեցնելու համար, որոշակի վթարածին խախտումների համար բարձրացնելու ենք տուգանային միավորները», - մանրամասնել է պատգամավորը:

ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻՑ ԱԶԱՏՎԵՑ

Կառավարության նիստի ընթացքում որոշում է կայացվել գերակա ոլորտում ներդրումային ծրագրի շրջանակներում մաքսատուրքից ազատել «ՌՈՅԱԼ-ԱՐՄԵՆԻԱ» ՀՁ ընկերությանը: Այս ընկերության կողմից ներմուծվող հումքը նախատեսվում է օգտագործել սուրճի արտադրության համար: Հաշվի առնելով, որ ցանկում ներկայացված ապրանքների զգալի մասի բնութագրերը փոփոխվել են, ինչպես նաեւ փոխվել է ապրանքներից մեկի ծածկագիր եւ ավելացել են նոր երկրներ՝ հետեւաբար ներկայումս անհրաժեշտություն է առաջացել ցանկը շարադրել նոր խմբագրությամբ: Ապրանքների ընդհանուր արժեքը եւ քանակը մնում են անփոփոխ:

ԿՍՏԵՂԾՎԻ ՊՈԱԿ

Գորիսի պետական քոլեջը եւ Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը միաձուլման ձեւով կվերակազմակերպվեն՝ստեղծելով «Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ: Նման նախագիծ է ներկայացրել ԿԳՄՍՆ-ն: Հիմնավորման մեջ նշված է, որ Գորիսի պետական քոլեջի շենքը տնօրինության կողմից հնարավորինս պահպանվել է եւ իրականացվել է մասամբ վերանորոգում, սակայն ունի ամբողջական վերանորոգման կարիք, շենքում առկա չէ ջեռուցման համակարգ, շենքի մի մասում ապրում են բնակիչներ: Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջին ամրացված ուսումնական մասնաշենքում ներկա պահին իրականացվում են վերակառուցման աշխատանքներ, որում նախատեսված է նաեւ Գորիսի պետական քոլեջում ուսուցանվող մասնագիտությունների հետագա ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Վերանորոգումից հետո Գորիսի բազմագործառութային պետական քոլեջը իր ուսումնական գործընթացը կիրականացնի համաձայն ՀՀ կառավարության 2007 թ. դեկտեմբերի 13-ի N 1490-Ն որոշմամբ պահանջվող նորմատիվներին, պայմաններին համապատասխան:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» Գ

ԱՄՓՈՓԵՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Փետրվարի 25-ին «Ամերիաբանկն» ամփոփեց «Իմ Ամերիա, իմ Հայաստան» նախագծի շրջանակում իրականացված «Իմ Հայաստան, իմ ապագա» ուսանողական մրցույթը՝ հայտարարելով կրթաթոշակ ստացող, Բերքլիի համալսարան մեկնող ու նախագծի ֆինանսավորում ստացող ուսանողների անունները: Հայաստանի պետական եւ մասնավոր բուհերի բոլոր ուսանողների համար «Ամերիաբանկի» եւ VISA-ի կողմից հայտարարված այս մրցույթի նպատակն էր բացահայտել եւ խրախուսել ակտիվ, Հայաստանի ապագայի հանդեպ ստացավ, ճկուն եւ պայծառ մտածելակերպ ունեցող ուսանողներին:

Մրցույթին մասնակցել են ուսանողներ Հայաստանի 36 բուհերից: Նրանք պայքարում էին երեք մրցանակի համար՝

160 կրթաթոշակ՝ ամսական 50,000 դրամի չափով 5 ամիս շարունակ, 2024-2025թ. ուսումնական երկրորդ կիսամյակի ընթացքում:

Բերքլիի համալսարանում ուսանողական կարճաժամկետ ծրագրի մասնակցության 10 ուղեգիր:

«Իմ Հայաստան, իմ ապագա» խորագրով 3 լավագույն նախագծերի ֆինանսավորում «Ամերիաբանկի» կողմից՝ ընդհանուր մինչեւ 10 մլն դրամի չափով:

Հիշեցնենք, որ մրցույթին մասնակցելու համար կարող էին դիմել 2024-2025 ուս. տարվա ուսանողները, ովքեր «Ամերիաբանկի» VISA Student քարտապան են, ընդ որում՝

կրթաթոշակին հավակնելու համար անհրաժեշտ էր լինել նվազագույնը 2-րդ կուրսի ուսանող, հավաքել ամենաբարձր միավորները թեստից, եւ ունենալ տվյալ բուհում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի առնվազն 65%-ը 2023-2024 ուսումնական տարվա համար

նախագծի ֆինանսավորում ստանալու եւ/կամ Բերքլիի կարճաժամկետ կրթական ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ էր հավաքել ամենաբարձր միավորները ե՛ւ թեստից, ե՛ւ նախագծերի գնահատումից /անկախ ՄՈԳ-ից/:

Նախագծերի գնահատումն իրականացրել է ժյուրին, որի կազմում էին անկախ մասնագետներ տարբեր ոլորտներից, ինչպես նաեւ VISA-ի ու «Ամերիաբանկի» ներկայացուցիչներ: Մասնավորապես, ժյուրիի կազմում էին ՀԱՀ դասախոս, գեղագիր Ռուբեն Մալայանը, իրավաբան, նկարիչ Նարեկ Վան Աշուղաթոյեանը, «ՄերակիՓալ» ընկերության հիմնադիր, կազմակերպական զարգացման քուչ Արմինե Մկրտչյանը, ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի «Հասարակայնության հետ կապեր» մագիստրոսական ծրագրի ղեկավար, SPRING PR ընկերության համահիմնադիր նախագահ Նվարդ Մելքոնյանը, VISA-ի Բիզնեսի զարգացման մենեջեր Անի Ալեքյանը, Ամերիաբանկի Տաղանդների եւ ծառայությունների գծով տնօրեն Արմինե Ղազարյանն ու Մարքեթինգի եւ հաղորդակցության գծով տնօրեն Ռեբեկա Հակոբյանը:

Մրցույթի ամփոփիչ միջոցառմանը ներկայացվեցին նաեւ այն երեք նախագծերը, որոնց իրականացման համար հեղինակները կստանան ֆինանսավորում «Ամերիաբանկի» կողմից: Մասնավորապես, ֆինանսավորում կստանան.

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանող Ժաննա Հարությունյանի նախագիծը, որով նախատեսվում է ասեղնագործական 8 զարդանախշերի ստեղծման տեխնիկաների տեսագրում եւ պահպանում

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանող Վահագն Զաքարյանի նախագիծը, որով նախատեսվում է մշակել բրայլյան ստեղնաշար տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանող Վոլոդյա Թորոսյանի նախագիծը, որով նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը միտված ծրագիր:

Հիշեցնենք, որ 2024-ին «Ամերիաբանկը» «Իմ Ամերիա, իմ Հայաստան» նախագծի շրջանակում մեկնարկեց երեք արշավ՝ «Իմ Ամերիա, իմ Հայաստան», «Իմ Ամերիա, իմ տուն» եւ «Իմ Հայաստան, իմ ապագա» խորագրերով: Նախագծի նպատակն է միավորել մարդկանց «Ամերիաբանկի» առաքելության շուրջ եւ միասին բարելավել կյանքի որակը:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՄԵԿ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը 2025-2026 ուստարվա համար հայտարարում է մրցույթ՝ Բուլղարիայի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում անվճար բարձրագույն (բակալավր եւ մագիստրատուրա) կրթություն ստանալու նպատակով (4 տեղ): Ուսուցումն իրականացվելու է բուլղարերենով, սակայն լեզվին չտիրապետող ուսանողներն անցնում են լրացուցիչ մեկ տարվա լեզվի դասընթաց (նախապատրաստական): Մրցույթին կարող են մասնակցել հանրակրթական դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների եւ բուհերի շրջանավարտները, ավարտական դասարանում կամ կուրսում սովորող օտար լեզուներին տիրապետող ՀՀ քաղաքացիները: Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել միայն մեկ մասնագիտության եւ մեկ կրթական աստիճանի համար:

ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԻՑ»

«Կոնվերս» բանկը ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանց, անհատ ձեռներեցների համար հանդես է գալիս նոր առաջարկով. աննախադեպ 0% միջնորդավճար ԱՄՆ դոլարով, Եվրոյով, Անգլիական ֆունտ ստեռլինգով եւ ԱՄԷ դիրհամով SWIFT փոխանցումների համար: Այս առաջարկն առանձնապես կհետաքրքի արտասահմանյան ընկերությունների հետ գործարար կապեր ունեցող, այդ թվում՝ ներմուծման, արտադրության, բեռնափոխադրումների կամ տուրիզմի ոլորտի, ծառայություններ մատուցող այն ընկերություններին, որոնց համար միջազգային փոխանցումներն առօրյա բիզնես գործունեության անբաժանելի մասն են: Առաջարկից կարող են օգտվել ինչպես «Կոնվերս» բանկի հաշվետեր, այնպես էլ բանկի հաճախորդ չհանդիսացող տնտեսվարողները՝ այցելելով բանկի ցանկացած մասնաճյուղ: «Կոնվերս» բանկի հաշվետեր իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը կարող են SWIFT փոխանցումներ կատարել նաեւ առցանց՝ Converse Business հավելվածով:

Բանկը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ

ՄԱՐՏԻՆ «ՄԱՆՈՒՇՅԱՆԱԿԱՆ ՇԱԲԱԹ» ԿԼԻՆԻ

2025 թվականի մարտի 14-18-ը Հայաստանում կանցկացվի «Մանուշյանական շաբաթ», որը նվիրված է Միսաք Մանուշյանին եւ ֆրանսիական դիմադրության շարժման նրա զինակիցներին եւ նպատակ ունի վերաիմաստավորել Մանուշյանի ժառանգությունը, ընդգծել նրա դերը համաշխարհային դիմադրության շարժման մեջ եւ խթանել ֆրանսիական եւ հայկական պատմամշակութային երկխոսությունը:

Միջոցառումների շարքը, որն ընդգրկում է թատերական ներկայացումներ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, վավերագրական ֆիլմերի ցուցադրություններ եւ քննարկումներ, կկազմակերպվի Երեւանում եւ Արտաշատում:

Նախագիծն իրականացվում է «ՍԱԹԷ - ԹՂԸ» թատերական միության եւ «ԱՐՏ - ԻՄԱԺ» մշակութային կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, Երեւանի քաղաքապետարանի, Հայաստանում Եվրոպական Միության ներկայացուցչության, ֆրանսիական Օվերն Ռոն Ալպեր տարածաշրջանի եւ Լիոնի քաղաքապետարանի աջակցությամբ եւ հովանու ներքո:

Նախագծի աջակիցներն են Հայաստանում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանությունը եւ ֆրանսիական ինստիտուտը, ««Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամը, Հայաստանի կինոգործիչների միությունը, Արտաշատի Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, Ֆրանսիայի Պանթեոնը, «Ռոժէ Վիոլէ» պատկերասրահը, Հայաստանում ֆրանսիական համալսարանը, «Ալեֆ» հրատարակչատունը:

ղասպանության թանգարան - ինստիտուտը, ««Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամը, Հայաստանի կինոգործիչների միությունը, Արտաշատի Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, Ֆրանսիայի Պանթեոնը, «Ռոժէ Վիոլէ» պատկերասրահը, Հայաստանում ֆրանսիական համալսարանը, «Ալեֆ» հրատարակչատունը:

Ա. ՄՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐՔԱԿԱՆ

ՄԵՍՍԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆՆ Է

Անգլիայի հավաքականի, «Մանչեսթեր Յունայթեդի» ու Մադրիդի «Ռեալի» նախկին կիսապաշտպան Դեյվիդ Բեքհեմը նշել է բոլոր ժամանակների լավագույն խաղացողին: «Իմ կարծիքով՝ Մեսսին լավագույնն է աշխարհում: Նա բոլոր ժամանակների մեծագույն ֆուտբոլիստն է», - Բեքհեմի խոսքերն է փոխանցում AS-ը: Հիշեցնենք, որ Մեսսին MLS-ում հանդես է գալիս «Ինտեր Մայամիում»: Բեքհեմն այս ակումբի համասեփականատերն է: Լիոյի գործող պայմանագրի ժամկետը ամերիկյան թիմի հետ նախատեսված է մինչեւ այս տարվա դեկտեմբերի վերջը: Transfermarkt-ի տվյալներով՝ արգենտինացու տրանսֆերային արժեքը կազմում է 20 միլիոն եվրո:

ՎՆԱՍՎԱԾՔ

Իսպանիայի գավաթի խաղարկության կիսաեզրափակիչի՝ «Ռեալ Սոսյեդադի» դեմ առաջին խաղից հետո (0:1), «Ռեալի» իսպանացի կիսապաշտպան Դանի Սեբալյոսը վնասվածք է ստացել: Այս մասին հայտնում է լրագրող Էդու Ագիրեն: Նշվում է, որ նախնական տվյալներով, իսպանացին կարող է բաց թողնել 3-4 շաբաթ: Ընթացիկ մրցաշրջանում 28-ամյա կիսապաշտպանը «արքայական» ակումբի կազմում մասնակցել է 30 հանդիպման՝ դառնալով 2 գոլային փոխանցման հեղինակ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ Է

«Միլանի» հարձակվող Ռաֆայել Լեաուն շարունակում է մնալ «Բարսելոնայի» ուշադրության կենտրոնում: Այս մասին հայտնում է ինսայդեր Նիկոլո Սկիրան: Աղբյուրի համաձայն՝ կատալոնական ակումբի ներկայացուցիչները տեղեկություն են խնդրել պորտուգալացու հետ հնարավոր գործարքի վերաբերյալ: Պաշտոնական բանակցությունները դեռ չեն սկսվել, խոսքը միայն հետաքրքրության մասին է: Պորտուգալացու պայմանագրի ժամկետը «ռոսոներիի» հետ նախատեսված է մինչեւ 2028 թվականի կեսերը: Պայմանագրում ներառված է 175 միլիոն եվրոյի գնման կետ, որը «կապտանռնագույնները» դժվար թե որոշեն ակտիվացնել: Ավելի վաղ նշվում էր, որ «Բարսելոնան» Լեաուին ձեռք բերելու համար կարող է բաժանվել թիմի բրազիլացի հարձակվող Ռաֆինյայից: Ընթացիկ մրցաշրջանում Ռաֆան «Միլանի» կազմում մասնակցել է 36 հանդիպման՝ դառնալով 9 գոլի եւ 7 գոլային փոխանցման հեղինակ:

ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԻ

Մադրիդի «Ռեալի» գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին գնահատել է թիմի բրազիլացի հարձակվող Էնդրիկի խաղը Իսպանիայի գավաթի խաղարկության կիսաեզրափակիչի առաջին խաղում՝ «Ռեալ Սոսյեդադի» նկատմամբ տարած հաղթանակից հետո (1:0): «Էնդրիկը շատ դիպուկ է, արագ եւ ուժեղ: Սակայն նա դեռ պետք է կատարելագործի գնդակով խաղը, բայց արագությունն ու հարվածները հիանալի են: Նա ֆանտաստիկ խաղացող է, որն արագ է սովորում», - ասել է Անչելոտին իր հետխաղյա մամուլի ասուլիսում:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԲ ԿԹՈՂԱՐԿՎԻ

Հայտնի է, որ վերջին տարիներին Apple ընկերությունն ակտիվ աշխատանք է տանում ծալովի հեռախոսների էկրաններին բնորոշ ծալքի գիծը վերացնելու ուղղությամբ, եւ կարծես թե դա հաջողվել է ընկերությանը: Ընկերությանը մոտ կանգնած աղբյուրները նշում են, որ այժմ այն մոտենում է բաղադրիչների մատակարարների ընտրության գործընթացի ավարտին, որը կավարտվի 2025 թվականի ապրիլին եւ ծալովի էկրանով Iphone-ները, ամենայն հավանականությամբ, վաճառքում կհայտնվեն 2027 թվականին: Ենթադրվում է, որ էկրանների հարցում մատակարարը կլինի Samsung Display-ը, որը առաջիններից է, որ սկսել է ծալովի էկրաններ արտադրել:

Եթե Apple ընկերությանը իսկապես հաջողվել է առանց ծալքի գծի ծալովի էկրանների մեխանիզմ մշակել, ապա այն կարող է ծալովի հեռախոսների շուկայում առաջատար դառնալ:

ՀԱՂՈՐԴՈՒՄԻՑ ՀԵՌԱՑՎԵԼ Է

Երգիչ Էրիկ Կարապետյանն օրերս ինստագրամյան իր միկրոբլոգի էջում հրապարակում էր կատարել, որ իր հայտնի՝ «Ոչ ավել, ոչ պակաս» երգը ադրբեջանցիները գողացել են, եւ այդ առիթով հարցին տրվել է իրավական ընթացք: Նշենք, որ Էրիկի երգը ադրբեջաներեն կատարվել է

ռուսական առաջին ալիքով, Անդրեյ Մալախովի հաղորդման ընթացքում: Երգիչը հայտնել էր, որ երգն արդեն երկրորդ անգամ առանց իր թույլտվության հնչել է աղավաղված տարբերակով, եւ ներկայացվել է որպես ադրբեջանական:

Երեկ պարզ է դարձել, որ Մալախովի հաղորդումից հեռացվել է այն հատվածը, որտեղ ադրբեջաներեն կատարվում է Էրիկ Կարապետյանի երգը:

Հարկ է նշել, որ «Песни от всей души» հաղորդման ինստագրամյան էջի մեկնաբանություններում իրական բողոքի ալիք է բարձրացել, ինչից հետո էլ հաղորդման՝ փետրվարի 16-ի եթերից հեռացվել է ադրբեջանցի երգիչների կատարման հատվածը: Հավելենք, որ երգիչ Էրիկ Կարապետյանի երգի երաժշտությունը գրվել է հենց երգչի կողմից 2018 թվականին Երեւանում, իսկ խոսքերի հեղինակը Գրիգոր Կյոկչյանն է:

ԱՆՆԱ ՄՐԱՊԻՈՆՅԱՆ

ԽԱՉԱՆՈՎԸ՝ ՄՐՑԱՇԱՐԻՑ ԴՈՒՐՍ

Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստ Կարեն Խաչանովը դուրս մնաց Դուբայի մրցաշարից: Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում ընթացող ATP մրցաշարի տղամարդկանց մենախաղի 1/8 եզրափակչում Խաչանովը մրցեց հույն Ստեֆանոս Ցիցիպասի հետ: 2,5 ժամ ձգված մրցախաղում Ցիցիպասը հաղթեց երեք սեթից հետո՝ 7:6, 2:6, 6:4: Կարեն Խաչանովը պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) վարկանիշային աղյուսակում 24-րդն է: Նա 4 անգամ հաղթել է միջազգային ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող մրցաշարում: Տոկիոյի 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր է:

Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստի լավագույն արդյունքը եղել է 2019 թվականին, երբ նա հասել է Rolan-Garros-ի քառորդ եզրափակիչ եւ 2021 թվականին՝դարձյալ քառորդ եզրափակիչ Ուիմբլդոնում: 2022-ին նա հասավ US Open-ի կիսաեզրափակիչ: 2023 թվականին եւս Խաչանովը դուրս է մնացել AusOpen-ի կիսաեզրափակչից:

● *Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում փետրվարի 28-ին, մարտի 1, 7, 29-ին տեղի կունենա «Մարդը ափի մեջ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ Հայ Առաքելական եկեղեցին կին հոգեւորական չունի: Ամենուրեք հայտարարվում է, թե Աստծո առաջ բոլորը հավասար են: Բայց հենց հերթը հասնում է եկեղեցուն, ապա հենց այստեղից էլ սկսվում է տղամարդկանց եւ կանանց անհավասարությունը:

Իրինա Հայրապետյան (43 տարեկան, երգահան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ աշխատանքի ու պարտականությունների բաժանումը բնավ չի նշանակում անհավասարություն: Եթե տանը ճաշը կինն է պատրաստում, իսկ տղամարդը հոգում ընտանիքի հիմնական ֆինանսական հարցերը, դա չի նշանակում, թե տղամարդիկ ավելի կարեւոր են: Եթե կանայք զավակ են ծնում, իսկ տղամարդիկ՝ ոչ, դա չի նշանակում, թե որեւէ մեկն ավելի կամ պակաս կարեւոր է: Նախ՝ ընթերցենք Աստվածաշունչը. «Ինչպես որ է Աստծո բոլոր եկեղեցիներում, կանայք թող լուռ մնան եկեղեցու մեջ, որովհետեւ թույլատրված չէ նրանց խոսել, այլ՝ հնազանդ լինել, ինչպես օրենքն էլ ասում է»:

Կնոջը տրված է ավելի ծանր, սակայն երջանկարար առաքելություն՝ որդեծնությունը: Որդեծնության հզոր կարողության շնորհիվ կինը ավելի երկար է ապրում, քան տղամարդը: Նաեւ այս առաքելությունը կատարելու ընթացքում կինը երբեմն կարիք ունի առանձնանալու տեւական ժամանակ՝ հղության ընթացքում, ծննդաբերության համար, հետծննդյան քառասնօրյա մաքրության համար, երեխային կերակրելու եւ խնամելու համար: Իսկ այդ ընթացքում, մի՞թե եկեղեցում պատարագ չպետք է մատուցվի: Բացի դրանից, քահանա լինել՝ չի նշանակում վայելել պատիվ, այլ՝ պատասխանատվություն: Ս. Բարսեղ Կեսարացին ասում է. «Եզեկիել մարգարեն Աստծո խոսքով զարհուրեցնում է ինձ՝ քահանաների վերաբերյալ այսպես ասելով. «Մարդու որդի, քեզ այդ ժողովրդի վրա տեսուչ եմ նշանակել. եթե տեսնես, որ սուրը գալիս է ու վրա է հասնում եւ շեփորով չազդարարես, եւ նրանք չզգուշանան, եւ սուրը գալով՝ որեւէ մեկին անպատրաստ գտնի, եւ նա մահանա իր անօրենության մեջ, նրա արյունը քո ձեռքից կպահանջեմ»»:

Օրինությամբ՝ Տ. Սմբատ քահանա Սարգսյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տ. Սմբատ քահանա Սարգսյանը խորապես մեկնաբանել է հարցի պատասխանը, եւ հասկանալի է, որ այս ամենը պարզապես դերերի բաժանում է:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում անվան փոխման պետական գրանցումը, ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ անվան փոխման պետական գրանցման համար, ի՞նչ ժամկետում է կատարվում անվանափոխման պետական գրանցումը, որքա՞ն է կազմում պետական տուրքի դրույքաչափը:

Լիա Մանուկյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ տասնվեց տարին լրացած անձ իրավունք ունի սահմանված կարգով փոխելու իր անունը, որը ներառում է անունը, հայրանունը եւ ազգանունը: Մինչեւ 16 տարեկան երեխաների անվան փոխման մասին դիմումը տրվում է նրա ծնողի /ծնողների/ կամ օրինական ներկայացուցիչների կողմից: 10 տարին լրացած երեխայի անվան փոխման դեպքում անհրաժեշտ է նրա համաձայնությունը: Անվան փոխման գրանցման համար պետք է ներկայացվեն՝

Դիմում, դիմողի անձը հաստատող փաստաթուղթը, տեղեկանք բնակության մասին, եթե անձնագրում բացակայում է հաշվառման մասին նշումը, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով այլ փաստաթղթեր: Անվան փոխման մասին դիմումը ՔԿԱԳ-ի տարածքային մարմնի կողմից քննության է առնվում դիմումը տալու օրվանից երկամսյա ժամկետում: Հարգելի պատճառների առկայության դեպքում այդ ժամկետը ՔԿԱԳ-ի տարածքային մարմնի ղեկավարը կարող է երկարաձգել առավելագույնը՝ մեկ ամսով, իսկ ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ-ի գործակալության պետը՝ առավելագույնը՝ 2 ամսով՝ ՔԿԱԳ-ի տարածքային մարմնի ղեկավարի միջնորդագրի հիման վրա:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անվան, հայրանվան, ազգանվան փոխման համար գանձվում է պետական տուրք՝ 5000 դրամ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Միջազգային զարգացման գործակալության (USAID) աշխատանքից ազատված աշխատակիցներն ու ակտիվիստները «պառկած ակցիա» են իրականացրել՝ ի նշան բողոքի:

Նրանք, դեմ լինելով USAID-ի գործունեության սահմանափակմանը, պառկել են գետնին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 -20 -4 -7
Կոտայքի լեռներ	-15 -19 -5 -7
Կոտայքի նախալեռներ	-6 -10 -1 -3
Գեղարքունիք	-16 -20 -6 -8
Լոռի	-10 -15 -3 +1
Տավուշ	-5 -8 -2 +2
Արագածոտնի լեռներ	-16 -20 -6 -10
Արագածոտնի նախալեռներ	-6 -9 0 -3

Արարատ	-4 -7 0 +2
Արմավիր	-6 -9 0 +3
Վայոց ձորի լեռներ	-15 -20 -6 -9
Վայոց ձորի նախալեռներ	-6 -11 0 -3
Սյունիքի հովիտներ	-5 -9 0 -4
Սյունիքի նախալեռներ	-12 -17 -2 -5
ԼՂՀ	-11 -15 -2 -4
Երեւան	-5 -9 -4 -4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.2.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*